

ձնաւորութեանց, գֆանն եւ զՈրդին ծնեալ ի Հօրէ
 նախ քան զյաւիտեանս, անախտաբար եւ անժա- 90
 մանակապէս, ոչ յետոյ եւ ոչ կրտսեր, այլ ի
 յաւիտենականն Հօրէ՝ յաւիտենական Որդի, յան-
 ժամանակ ծնողէ՝ անժամանակ ծնունդ, Հանգու-
 նատիպ եւ հաւասար ամենայնիւ, քանզի ոչ էր
 Հայր երբեմն՝ յորժամ ոչ էր Որդի. այլ որպէս 95
 միշտ Հայրն՝ Հայր, եւ Որդին Որդի:

Նոյնն ի վախճան յաւիտեանցս ծնաւ մար-
 մնով ի սուրբ Կուսէն Մարիամայ, Աստուածն կա-
 տարեալ, եւ նոյն ինքն եւ մարդ կատարեալ. հոգ-
 ւով եւ մտօք, անորոշելի մարդկութեամբ, եւ ան- 100
 թերի Աստուածութեամբ, եղև մարդ՝ առաջին
 ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինօք՝ ըստ Առաքելոյն.
 յանձն էառ զամենայն կիրս մարդկային որ ինչ ի
 բնութեանս էր՝ բաց ի մեղաց, ոչ ծառայելով
 իբրեւ զմեզ կրիցն բնականաց. այլ կիրք բնու- 105
 թեանս ծառայէին նմա իբրեւ Աստուծոյ: Յաղագս
 որոյ եւ հաղորդիւր կամաւորացն, եւ ականայքն
 խոյս տուեալ փախչէին ի նմանէ, զարհուրեալք
 իբրեւ յԱստուծոյ: Եւ յետ ամաց երեսնից զայ
 ի Յորդանան. մկրտի ի Յովհաննէ, եւ վկայի յԱս- 110
 տուծոյ Հօրէ՝ Որդի սիրելի՝ Կուսածին մարմնովն,
 եւ սուրբ Հոգին աղանակերպ իջանէ, յայտնեալ
 զփառս էակցին. որով եւ վարի յանապատ փորձիլ
 ի սատանայէ, եւ յաղթէ նմա մարմնովն աղամային:
 Եւ նոյն ժամայն ժողովէ զաշակերտան, առնէ 115
 նշանս եւ զօրութիւնս բազումս, հրաշս եւ զար-
 մանալիս յոյովս: Ուստի եւ ի վախճանի կամաւո-
 րութեամբ զայ ի շարշարանս, եւ յանձն առնու
 զմահ խաչի, եւ մարդապէս մեռանի ի վերայ նորա,
 եւ յառնէ փառօք յաւուր երրորդի, եւ երեւի 120
 աշակերտացն պէս պէս արուեստիք յաւուրս քա-
 ռասուն, հաղորդելով ընդ նոսն հացիւ. եւ յետ
 այնորիկ յանդիման աշակերտացն՝ ինքնիշխան
 զօրութեամբ համբառնայ յերկինս նովին մարմնովն՝